ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հոկտեմբերի 2024 թվականի N 375 - Ա

«ԽՆԱԾԱԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱՎԱԶԴ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 121-րդ հոդվածի 1-ին մասով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի «ժգ» ենթակետով, հիմք ընդունելով «Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսումնասիրություն կատարած աշխատանքային խմբի 2024 թվականի սեպտեմբերի 24-ի և մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2024 թվականի սեպտեմբերի 26-ի զեկուցագրերը, «Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Աբրահամյանի գրավոր բացատրագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Աշխատանքային պարտականությունները և տնօրենին վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար «Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արտավազդ Աբրահամյանի նկատմամբ կիրառել «աշխատանքային պայմանագրի լուծում» կարգապահական տույժը:

2. «Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արտավազդ Աբրահամյանի հետ 2022 թվականի փետրվարի 1-ին կնքված N 04 աշխատանքային պայմանագիրը 2024 թվականի հոկտեմբերի 8-ից համարել լուծված:

Recoverable Signature

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN HAYK 1302840382

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024թ. հոկտեմբերի 7
ք. Կապան